

Քաղվածք ՀՀ ՓՊ խորհրդի 12.01.2012թ. «Փաստաբան Նեմո Մեհրաբյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ 2/3- Ա որոշումից

31.01.2012 12:07

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
12.01.2012թ. թիվ 2-րդ նիստի
N2/3-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ

Փաստաբան Նեմո Մեհրաբյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը քննության առնելով փաստաբան Նեմո Մեհրաբյանի /արտոնագիր թիվ 206/ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պարզել է.

Փաստաբան Նեմո Մեհրաբյանը ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում քննվող թիվ 69107510 քրեական գործով հանդես է եկել, որպես կասկածյալ Մեդիկո Գամուշի Ազմանյանի պաշտպան և մասնակցել վերջինիս 15.11.2010թ. և 19.11.2010թ. համապատասխանաբար, որպես կասկածյալի և մեղադրյալի հարցաքննություններին և ստորագրել այդ մասին կազմված արձանագրություններում:

Մեդիկո Գամուշի Ազմանյանի ցուցմունքների հիման վրա որպես մեղադրյալ է ներգրավվել նաև ԻԻՀ քաղաքացի Ղուլամրեզա Օրուշի Բահրամի Ֆարին:

Հետագայում Մեդիկո Գամուշի Ազմանյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճվել է՝ նրա արարքում հանցագործության հատկանիշների բացակայության հիմքով և վերջինս գործով հանդես է եկել որպես վկա:

Ներկայումս, գործի դատաքննության ընթացքում, փաստաբան Նեմո Մեհրաբյանը չի հանդիսանում Մեդիկո Գամուշի Ազմանյանի փաստաբանը: Այնուհետև նա ստանձնել է ԻԻՀ քաղաքացի Ղուլամրեզա Օրուշի Բահրամի Ֆարինի պաշտպանությունը՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ նրա նախկին վստահորդ Մեդիկո Գամուշի Ազմանյանի ցուցմունքների հիման վրա է ԻԻՀ քաղաքացի Ղուլամրեզա Օրուշի Բահրամի Ֆարին ներգրավվել նույն գործով որպես մեղադրյալ, սակայն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, այսինքն՝ նրանց շահերում կան հակասություններ:

Վերոգրյալից հետևում է, որ փաստաբան Նեմո Մեհրաբյանի գործողություններում առերևույթ առկա են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի, Կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 2-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների խախտման հատկանիշներ:

Փաստաբան Նեմո Մեհրաբյանի բացատրությունները.

Փաստաբան Նեմո Մեհրաբյանը, ներկայացել է Կարգապահական հանձնաժողովի լսումներին: Պատասխանողի բացատրությամբ, վերջինս ընդունել է իր կողմից վերը նշված խախտումները կատարելու փաստերը:

Պալատի կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը.

Պալատի կարգապահական հանձնաժողովը 22.12.2011թ-նի թիվ ԿԳ-11036 եզրակացությամբ գտել է, որ փաստաբան Նեմո Մեհրաբյանի (արտոնագիր թիվ 206) գործողություններում առկա է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի, Կանոնագրքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 2-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտում և առաջարկել է՝ փաստաբան Նեմո Մեհրաբյանին նկատողության հայտարարելու ձևով ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նեմո Մեհրաբյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանություններով:

Պալատի Կանոնադրության 6.5 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պալատի անդամը պարտավոր է պահպանել Օրենքի, սույն Կանոնադրության և Կանոնագրքի պահանջները, իսկ «ե» ենթակետի համաձայն՝ իր գործունեությամբ և վարքագծով բարձր պահել Պալատի և փաստաբանի հեղինակությունը և բարի համբավը:

Ինչպես հետևում է առկա փաստերից և կարգապահական գործում առկա բացատրության բովանդակությունից, նախկին և ներկա պաշտպանյալների շահերի միջև առկա հակասության պայմաններում ակնհայտ է, որ Ն.Մեհրաբյանը իրավունք չուներ և չէր կարող մասնակցել քրեական գործով վարույթին, որպես Ղուլամրեզա Օրուջի Բահրամի Ֆարիի իրավունքների և շահերի պաշտպան: Վերոգրյալը նկատի ունենալով խորհուրդը արձանագրում է, որ նման երևույթները խիստ դատապարտելի են, Ն.Մեհրաբյանը նման գործողություններով ոտնահարել է իր պաշտպանյալների իրավունքները և օրինական շահերը:

Ուստի խորհուրդը գտնում է, որ պատասխանողը նշված ոչ իրավաչափ գործողություններով թույլ է տվել ոչ թե ուղակի խախտում այլ կոպիտ խախտում:

Վերոգրյալը նկատի ունենալով խորհուրդը գտնում է, որ Պատասխանողին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի, Կանոնագրքի, 14-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 2-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտման հիմքերով Պալատի խորհուրդը

Որոշել է՝

- Փաստաբան Նեմո Մեհրաբյանին /արտոնագիր թիվ 206/ ենթարկել կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել կարգապահական տույժ՝ խիստ նկատողության ձևով,

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })